

Ի. ԱՏԱԼԻՆ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՔ
ՀԻՄՆԱԿԱՆ
ԼՈԶՈՒԵԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ՀԱՅԿՈՒՍԴՐԱԾ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք.

b. USUALԻՆ

ԱՐԵՎԱՏՅԱՆ Հ 1961 թ.

ЗКПА
У85

178

333.5(47)

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ
ԼՈՁՈՒՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

~~1096~~



ՀԱՅԿԱԲՈՒՀԱՐԱՍ

△

1937

△

ՑԵՐԵՎԱՆ

A II
6816

И. СТАЛИН

• ТРЕХ ОСНОВНЫХ ЛОЗУНГАХ ПАРТИИ
ПО КРЕСТЬЯНСКОМУ ВОПРОСУ

Армпартиздат, Ереван, 1937

Ընկ. Յան—սկի:

Զեր նամակն ստացա, իհարկե, ժամանակին: Պատասխանում եմ վորոշ ուշացումով, վորի համար ներողություն եմ խնդրում:

1) Լենինն ասում ե, վոր «ամեն մի հեղափոխաւրյան ամենագլուխաւրյան իշխանության հարցն ե» (տես հ. XXI, էջ 142): Վար գասակարգի կամ վար դասակարգերի ձեռքումն և կենտրոնացած իշխանությունը, վար գասակարգը կամ վար դասակարգերը պետք ե տապալվեն, վար գասակարգը կամ վար դասակարգերը պետք ե վերցնեն իշխանությունը՝ այս ե «ամեն մի հեղափոխության ամենագլխավոր հարցը»:

Կուսակցության հիմնական ստրատեգիական լոգունգները, վորոնք իրենց ուժը պահպանում են հեղափոխության այս կամ այն ետապի ամբողջ ժամանակաշրջանում, չեն կարող հիմնական լոգունգներ անվանվել յեթե նրանք ամբողջությամբ և լիովին չեն հենվում Լենինի այս կարգինալ թեզիսի վրա: Հիմնական լոգունգները ճիշտ կարող են լինել միայն այն դեպքում, յեթե նրանք կառուցվում են դասակարգային ուժերի մարքսիստական վերլուծության բազայի վրա, յեթե նրանք ուրվագծում են դասակարգային կովի ֆրոնտում հեղափոխական ուժերի դասավորման ճիշտ սխեման, յեթե նրանք հեշտացնում են մասսաներին մոտեցնելը հեղափոխության հաղթության համար մղվող պայքարի ճակատին, իշխանությունը նոր դասակարգի կողմից վերցնելու համար մղվող պայքարի ճակատին, յեթե նրանք կուսակցության համար հեշտացնում են այդ խնդրի իրազործման համար անհրաժեշտ լայն ու հզոր քաղաքական բանակի կազմակերպումը ժողովրդական լայն մասսաներից:

Հեղափոխության այս կամ այն ետապի ընթացքում կարող են տեղի ունենալ պարտություններ ու նահանջներ, անհաջողություններ ու առանձին տակտիկական սխալներ, բայց այդ գեր չեն նշանակում, թե հիմնական ստրատեգիական լոգունգը ճիշտ չե: Այսպես, որինակ, մեր հեղափոխության տռաջին ետապում համ-

բողջ գյուղացիության հետ մեկտեղ, ցարի ու կալվածատերերի գեմ բուրժուազիային չեղոքացնելով, հանուն բուրժուազիմուրատական հեղափոխության հաղթության» հիմնական լողունգը միանդամայն ճիշտ եր, չնայած այն բանին, վոր 1905 թվի հեղափոխությունը պարտություն կրեց:

Հետեաբար, չի կարելի կուսակցության հիմնական լողունգի հարցը շփոթել հեղափոխության դարձացման այս կամ այն աստիճանի վրա տեղի ունեցող նրա պարտությունների կամ անհաջողությունների հարցի հետ:

Կարող եւ պատահելի վոր հեղափոխության ընթացքում կուսակցության հիմնական լողունգն արգեն հասցրել և հին զասակաբգելի կամ հին զասակաբգի իշխանության տապարման, բայց հեղափոխության մի շարք եյտական պահանջներ, վորոնք այդ լուղունգից են բղխում, իրականացում չեն ստացել կամ նրանց իրականացումը յերկարաձգվել և մի ամբողջ ժամանակաշրջանով, կամ նրանց իրականացման համար նոր հեղափոխություն եւ պահանջվում, բայց այդ դեռ չի նշանակում, թե հիմնական լողունգը սխալ է: Այսպես, որին, 1917 թվի Փետրվարյան հեղափոխությունը տապալեց ցարիզմն ու կալվածատերերին, բայց չհասցրեց կարլածատիրական հոգերի կոնֆիսկացիայի իրականացման և այն, բայց այդ դեռ չի նշանակում, թե մեր հիմնական լողունգը հեղափոխության առաջին ետապում ճիշտ չեր: Կամ ելի, Հռկտեմբրյան հեղափոխությունն իրականացրեց բուրժուազիայի տապալումը և իշխանության անցումը պրոլետարիատի ձեռքը, բայց մեկ անգամից չտարավ դեպի ա) ընդհանուրապես բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը և բ) մասնավորապես գյուղում կուլակությանը մեկուսացնելը, — այս բանը յերկարաձգելով վորոշ ժամանակաշրջանով, բայց այդ դեռ չի նշանակում, թե հեղափոխության յերկրորդ ետապում «ամենաշքավոր գյուղացիության հետ մեկտեղ, կապիտալիզմի դեմ քաղաքում ու գյուղում, միջակ գյուղացիությունը չեղոքացնելու պայմանով՝ հանուն պրոլետարիատի իշխանության» մեր հիմնական լողունգը ճիշտ չեր:

Հետեաբար, չի կարելի կուսակցության հիմնական լողունգի հարցը շփոթել այդ լողունգից բղխող այս կամ այն պահանջների իրականացման ժամկետի ու ձեկերի հարցի հետ:

Այս պատճառով մեր կուսակցության ստրատեգիական լուղունգները չի կարելի գնահատել վհաջող այս կամ այն ժամանակաշրջանում ունեցած եպիզոդիկ հաջողու-

թյունների կամ պարտությունների տեսակետից, վհչ եւ առավել ևս, այդ լողունգներից բոլոսող այս կամ այն պահանջների իրականացման ժամկետների կամ ձեւերի տեսակետից։ Կուսակցության սարատեղիական լողունգները կարող են գնահատվել զասակարգացին ուժիքի մարքսական վերլուծության և հեղափոխության հաղթանակի համար, իշխանությունը նոր գասակարգի ձեռքում կենտրոնացնելու համար մղվող պայքարի ճակատում ճիշտ գասավորելու տեսակետից միայն։

Զեր սխալը, ընկե, Յան — սկի, այն ե, վոր գուք շըջանցել եք մեթօդոգիական այս կարեռագույն հարցը կամ չեք հասկացել այս։

2) Դուք գրում եք ձեր նամակում։

«Արդյոք ճիշտ ե այն պնդումը, թե մենք ամբողջ գյուղացիության հետ զաշնակցած ընթացել ենք վիայն մինչև Հոկտեմբերը։ Վհչ, ճիշտ չեւ Շաշինք ամբողջ գյուղացիության հետ լողունգն ուժի մեջ եր մինչև Հոկտեմբերը, Հոկտեմբերի մամենտիթ յեվ Հոկտեմբերից հետո յեղած առաջին ժամանակաշրջանում, ինչ չափով վոր ամբողջ գյուղացիությունը շահագրգոված եր բուրժուական հեղափոխությունը մինչև կերչն ավարտելու գործով։»

Այսպիսով այս մեջբերումից դուքս ե գալիս, վոր կուսակցության սարատեղիական լողունգը հեղափոխության առաջին ետապի ընթացքը (1905 թ. — 1917 թ. փետրվար), յերբ բանը վերաբերում եր ցարական-կալվածատիրական իշխանության տապալմանը և պրոլետարիատի ու գյուղացիության դիկտուրայի հաստատմանը, չեր տարբերվում հեղափոխության յերկրորդ ետապի (1917 թ. փետրվար — 1917 թ. հոկտեմբեր) սարատեղիական լողունգից, յերբ բանը վերաբերում եր բուրժուազիայի իշխանության տապալմանը և պրոլետարիատի դիկտուրայի հաստատմանը։ Հետևաբար, դուք ժիտում եք հիմնական տարբերությունը բուրժուազիամոլորատական հեղափոխության և պրոլետարական-սոցիալիստական հեղափոխության միջև։ Իսկ այս սխալը դուք գործում եք այն պատճառով, վոր յերեխ չեք ուզում հասկանալ այն հաստակ բանը, վոր սարատեղիական լողունգի հիմնական թեման հանդիսանում ե իշխանության հարցը հեղափոխության տալյալ ետապում, այն հարցը, թե վի՞ր գասակարգն ե տապալում և վի՞ր գասակարգի ձեռքն ե անցնում իշխանությունը։ Հաղիվ թե հարկ կա ապացուցենու, վոր դուք այստեղ արմատապիսանիրավացի յեք։

Դուք ասում եք, վոր Հոկտեմբերի մոմենտին և Հոկտեմբերից հետո՝ առաջին ժամանակաշրջանում, մենք կիրառում եյինք

«Դաշինք ամբողջ գյուղացիության հետ» լոգունդը, ինչ չափով
վոր ամբողջ գյուղացիությունը շահագրգոված եք բուրժուական
հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու գործով: Բայց մվ ասաց
ձեզ, թե Հոկտեմբերյան հեղաշրջումն ու Հոկտեմբերյան հեղա-
փոխությունն սպասվում եյին կամ իրեն իրենց հիմնական խնդիր
եյին դնում բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասց-
նելը: Վճրտեղից եք դուք այդ վերցրել: Միթե բուրժուազիայի
իշխանության տասլալումը և պրոլետարիատի իշխանության հաւա-
ռատումը կարելի յե տեղավորել բուրժուական հեղափոխության
շրջանակներում: Պրոլետարիատի գիլտատուրայի նվաճումը բուր-
ժուական հեղափոխության շրջանակներից գուրս գալ չե արդյոք:
Ի՞նչպես կարելի յե պնդել թե կուլակները (չե վոր նույնպես
գյուղացիներ են) կարող եյին աջակցել բուրժուազիայի տապալ-
մանը և իշխանության անցմանը պրոլետարիատին: Ի՞նչպես կա-
րելի յե ժխտել վոր հողի ազգայնացման, հողի մասնավոր սե-
փականության վերացման, հողի առուծախն արգելելու և այն
գեկրեար, չնայած այն բանին, վոր այն չի կարող սոցիալիստա-
կան գեկրեան ձանաչվել անց ենք կացրել մեզ մոտ կուլակու-
թյան գետ պայմանական և վոչ թե նրա հետ գաշնակցած: Ի՞նչպես
կարելի յե պնդել, թե կուլակները (նոյնպես գյուղացիներ) կարող
եյին աջակցել խորհրդագյին իշխանության գեկրեաներին ֆար-
բիկաների, դորձարանների, յերկաթուղիների, բանկերի և այլնի
եքսուլուպրիացիայի վերաբերյալ, կամ իմպերիալիստական պատե-
րազմը քաղաքացիական պատերազմի վերածելու՝ պրոլետարիա-
տի լողունգին: Ի՞նչպես կարելի յե պնդել, թե Հոկտեմբերի մեջ
հիմնականը հանդիսանում են վահ թե այդ և գրանց նման ակ-
տերը, վահ թե բուրժուազիայի տապալումն ու պրոլետարիատի
գիլտատուրայի հաստատումը, այլ բուրժուական հեղափոխութ-
յունը մինչև վերջը հասցնելը:

Վեհ չկա այն մասին, վոր Հոկտեմբերյան հեղափոխության
գլխավոր ինսդիրներից մեկը բուրժուական հեղափոխությունը
մինչև վերջը հասցնելն եք, վոր առանց Հոկտեմբերյան հեղափո-
խության նա չեր կարող մինչև վերջը հասցվել, ինչպես նաև
ինքը Հոկտեմբերյան հեղափոխությունը չեր կարող ամբապնդվել
առանց բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու,
և ինչ չափով վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը մինչև վերջն
եր հասցնում բուրժուական հեղափոխությունը, նա համակրու-
թյուն պետք ե գտներ բոլոր գյուղացիների կողմից: Այս ամենն
անվիճելի յե: Բայց միթե կարելի յե այս հիման վրա պնդել,
6

թե բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը վճէ
թե ածանցիկ յերկույթ եր Հոկտեմբերյան հեղափոխության
ընթացքի մեջ, այլ նրա եյությունը կամ նրա հիմնական նպա-
տակը: Ել գնրտեղ մնաց ձեզ մոտ Հոկտեմբերյան հեղափոխու-
թյան գլխավոր նպատակը — բուրժուադիայի իշխանության տա-
պալումը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը, իմակե-
րիալիստական պատերազմի վերածումը քաղաքացիական պատե-
րազմի, կապիտալիստներին եքսպրոլիբացիայի յենթարկելը և
այլն: Յեկ յեթե ստրատեգիական լոգունգի գլխավոր թեման ամեն
մի հեղափոխության հիմնական հարցն ե, այսինքն իշխանու-
թյունը մի դասակարգի ձեռքից մյուս դասակարգի ձեռքն անց-
նելու հարցը, ապա այստեղից պարզ չեմ միթե, վոր բուրժուական
հեղափոխությունը պրոլետարական իշխանության կողմից մինչև
վերջը հասցնելու հարցը չի կարելի շփոթել բուրժուազիայի տա-
պալման ու հենց այդ պրոլետարական իշխանությունը նվաճելու
հարցի հետ, այսինքն այն հարցի հետ, վորը ստրատեգիական
լոգունգի գլխավոր թեման ե հանդիսանում հեղափոխության
յերկորդ ետապում:

Պրոլետարիատի դիկտատուրայի ամենամեծագույն նվաճում-
ներից մեկն ել այն ե, վոր նա մինչև վերջը հասցրեց բուրժուա-
կան հեղափոխությունը և խստակ ավլեց-մաքրեց միջնադարյան
կեղալը: Սա գյուղի համար ունեցավ ամենագլխավոր ու խսկապես
վճռական նշանակություն: Առանց դրան չեր կարող իրականացնել
գյուղացիական պատերազմների միացումը պրոլետարական հեղա-
փոխության հետ, վորի մասին Մարքսը խոսել ե գեռևս անցյալ
դարի յերկրորդ կեսին: Առանց դրան չեր կարող ամրապնդվել
պրոլետարական հեղափոխությունն ինքը: Ըստսմին՝ հարկավոր ե
նկատի ունենալ հետեյալ կարևոր հանգամանքը: Բուրժուական
հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը յեղակի ակտ չե: Իրա-
կանում նա մի ամբողջ ժամանակաշրջան տեսք՝ ընդգրկելով վճէ
միայն 1918 թվականի պատառները, ինչպես գուք պնդում եք
ձեր նամակում, այլև 1919 թվականի (*Պոլոլժյան* — Ռերալ) ու
1919 — 1920 թ. թ. (*Ռերալինա*) պատառները: Յես նկատի
ունեմ կոլչակի ու Դենիկինի արշավանքը, յերբ ամբողջությամբ
առած գյուղացիության առաջ ծառացավ կալվածատիրական
իշխանության վերականգնման վտանգը և յերբ նա հենց վորպես
ամբողջուրյան հարկադրված եր համախմբվելու խորհրդային իշխա-
նության շուրջը այն նպատակով վորպեսի ապահովի բուրժուա-
կան հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը և ձեռքում պահի

այդ հեղափոխության պառուղները: Կենդանի կյանքի պրոցեսների այս բարգությունն ու բաղմաղանությունը, զիկտատուրայի անմիջականորեն սոցիալիստական խնդիրների այս ռդարմանահրաշը միահյուսումը բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու խնդրի հետ հարկավոր և միշտ աչքի առաջ ունենալ՝ ճիշտ հասկանալու համար ինչպես կենդնից ձեր բերած ցիտատները, այնպես ել կուսակցական լողունդները կյանքում կենսագործելու մեխանիկան: Կարելի յեւ արդյոք ասել, թե այս միահյուսումը խոսում է կուսակցության լողունդի սխալ լինելու մասին հեղափոխության լերկորդ ետապում, թե այդ լողունդը չի տարբերվում հեղափոխության առաջին ետապի լողունդէց: Վոչ, չեւ կարելի ասել: Ընդհակառակը, այդ միահյուսումը միայն հաստատում է կուսակցության լողունդի ճշությունը հեղափոխության յերկրորդ ետապում, այն եւ ամենաշեալիր դյուզացիության հետ մեկտեղ, կապիտալիստական բուրժուազիայի գեմ քաղաքում ու գյուղում, հանուն պրոլետարիատի իշխանության և այլն: Ինչնու: Այն պատճառով, վոր բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու համար հարկավոր եր նախ Հոկտեմբերին տապալել բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի իշխանություն հաստատել վորովհետև միայն այդպիսի իշխանությունն և ընդունակ մինչև վերջը հասցնելու բուրժուական հեղափոխությունը, իսկ վորպեսզի Հոկտեմբերին հաստատելինք պրոլետարիատի իշխանությունը, հարկավոր եր Հոկտեմբերի համար նախապատրաստել ու կազմակերպել համագույն քաղաքական բանակ, վորն ընդունակ լիներ տապալելու բուրժուազիային, ընդունակ լիներ հաստատելու պրոլետարիատի իշխանությունը, ըստվորում հարկ չկա ապացուցելու, վոր այդպիսի քաղաքական բանակ մենք կարող ենք նախապատրաստել ու կազմակերպել միայն այս լողունդով՝ պրոլետարիատի դաշնք ամենաչքավոր դյուզացիության հետ ընդունակ բուրժուազիայի, հանուն պրոլետարիատի դիկտատուրայի: Պարզ ե, վոր առանց այդպիսի ստրատեգիական լողունդի, վորն անց եր կացվում 1917 թ. ապրիլից մինչև 1917 թ. հոկտեմբերը, մենք չեյնք կարող այդպիսի քաղաքական բանակ ունենալ, կնշանակի Հոկտեմբերին չեյնք կարող հաղթություն տանել, չեյնք տապալի բուրժուազիայի իշխանությունը և, հետեւաբար, հարավորություն չեյնք ունենա մինչև վերջը հասցնելու բուրժուական հեղափոխությունը:

Ահա թե ինչու չի կարելի բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը հակագրել հեղափոխության յերկրորդ

ետապի ստրատեգիական լողունգին, վորի խնդիրն եթ՝ ապահովել իշխանության գրավումը պրոլետարիատի կողմից:

Այս բոլոր «հակասություններից» խուսափելու մի միջոց միայն կա—ընդունել հեղափոխության առաջին ետապի (բուրժուազմություն) ստրատեգիական լողունգի և հեղափոխության յերկրորդ ետապի (պրոլետարական հեղափոխություն) ստրատեգիական լողունգի միջև յեզած հիմնական տարրերությունը, ընդունել, վոր հեղափոխության առաջին ետապի ժամանակաշրջանում մենք ընթանում եյինք ամբողջ գյուղացիության հետ մեկտեղ՝ հանուն բուրժուազմությական հեղափոխության, իսկ հեղափոխության յերկրորդ ետապի ժամանակաշրջանում մենք ընթանում եյինք ամենաչափոր գյուղացիության հետ մեկտեղ կապիտալի իշխանության գեմ՝ հանուն պրոլետարական հեղափոխության: Իսկ սա հարկավոր և ընդունել, վորովհետեւ այս բանին մեզ պարտավորեցնում ե հեղափոխության առաջին ու յերկրորդ ետապների ժամանակի դասակարգային ուժերի վերլուծությունը: Հակառակ դեպքում կարելի չեր լինի բացարել այն փաստը, վոր մինչև 1917 թվի փետրվարը մենք աշխատանքը կատարում եյինք՝ լողունգունիւնալով պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական գիտատուրան, իսկ 1917 թվի փետրվարից հետո այդ լողունգը փոխարինեցինք՝ պրոլետարիատի ու ամենաչափոր գյուղացիության սոցիալիստական գիտատուրա լողունգով: Համաձայնեցնք, ընկ. Յան—սկի, վոր մի լողունգի այս փոխարինումը մի այլ լողունգով 1917 թվի մարտ—ապրիլին չի կարող բացարկել ձեր սիեմայի կիրառման դեպքում:

Կուսակցության ստրատեգիական յերկու լողունգների այս հիմնական տարրերությունը կենինը նշել ե գեռնս իր «Յերկու տակտիկա» բրոցյուրում: Նա այսպես և ձևակերպել բուրժուազմությունը կուսակցության հեղափոխության հախաղատրաստման ժամանակի կուսակցության լողունգը.

«Պրոլետարիատը պետք ե մինչև վերջը տանի զեմոկրատական հեղաշրջումը, իրեն միացնելով գյուղացիության մասսան, վորպեսզի ուժով ճգմի ինքնակալության զիմանպությունը և ջատի բուրժուազիայի անկայունությունը» (անս հ. VIII, էջ 96):

Այլ կերպ ասած՝ ամբողջ գյուղացիության հետ մեկտեղ ինքնակալության գեմ, բուրժուազիային չեղոքացնելով՝ հանուն դեռ կուսակցության հեղաշրջման:

Ինչ վերաբերում ե կուսակցության լողունգին սոցիալիստա-

Պահն հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում, ապա Լենինն այդ լողունգն այսպես և ձեւկերպել:

«Պոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի՝ իրեն միացնելով բնակչության կիսապրոլետարական տարրերի մասսան, վրապեսզի ուժով կոտրի բուրժուազիայի դիմադրությունը և ջատի գյուղացիության ու մանր բուրժուազիայի անկայունությունը» (տես նույն տեղը):

Այլ կերպ ասած՝ ամենաչքավոր գյուղացիության ու առնաւարակ բնակչության կիսապրոլետարական խավերի հետ մեկտեղ ընդումը բուրժուազիայի՝ մանր բուրժուազիան քաղաքում և գյուղում չեղորացներով՝ հանուն սոցիալիստական հեղաշրջման:

Դա 1905 թվականին եր:

1917 թվի ապրիլին, բնորոշելով այն ժամանակի քաղաքական կացությունը վորպես պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատորայի միահյուսում բուրժուազիայի ու եալ իշխանության հետ, Լենինն ասում էր.

«Բնաթացիկ մոմենտի յուրոքինակությունը Ռուսաստանում այն անցումն է¹, վոր կատարիլ և հեղափոխության առաջին ետապից, վորը, պրոլետարիատի թերի գիտակցականության և թերի կազմակերպվածության շնորհիվ՝ իշխանությունը տվից բուրժուազիային, — դեպի նրա յերկրադ հստագը, վորն իշխանությունը պետք է առ պրոլետարիատի ու գյուղացիության ամենաչքավարի խավերի՝¹ ձեռքը» (տես Լենինի «Ապրիլյան թեզիսները», հ. XX, էջ 88):

1917 թվի ոգոստոսի վերջին, յերբ Հոկտեմբերի համար կատարվող նախապարաստությունն ընթանում եր ամբողջ թափով, Լենինը «Քյուղացիներն ու բանվորները» հատուկ հոգվածում գրում էր.

«Միայն պրոլետարիատն ու գյուղացիուրյանը¹ կարող են առավալել միապետությունը — այս եր այն ժամանակվա (նկատի յե առնված 1905 թվականը, ի. Ստ.) նկատմամբ մեր գասակարգային քաղաքականության հիմնական ընորոշումը: Յեկ այդ բնորոշումը ճիշտ եր, 1917 թվի փետրվարն ու մարտը մի ավելորդ անգամ հաստատեցին այդ: Միայն պրոլետարիատը, վոր զեկավարում և ամենաչօպիր գյուղացիուրյանը¹ (կիսապրոլետարներին, ինչպիս ասում է մեր ծրագիրը), կարող է պատերազմը վերջացնել զեմոկրատական հաշտությամբ, բռնիւ նրա հասցրած վերքերը, սկսել անպայման անհրաժեշտ և անհետանգիլ զարձած քայլերը դեպի սոցիալիզմ, — այս ե մեր զառակարգին քաղաքականության բնորոշումն այժմ» (տես հ. XXI, էջ 111):

Այս հարկավոր չե այնպես հասկանալ, թե մենք արդեն իրը թե այժմ ունենք պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիու-

¹ Ընդգծումն իմն է: ի. Ստալին:

թյան գիլտատուրաւ Այդ, իհարկե, ճիշտ չեւ Մենք դեպի Հոկտեմբեր ընթանում եյինք պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության գիլտատուրայի լոզունգով և այն իրականացրենք Հոկտեմբերին ձեականորեն, ինչ չափով վոր մենք ըլոկ ունեյինք ձախ ես-երների հետ և զեկավարությունը բաժանում եյինք նրանց հետ, թեև փաստողեն մեզանում արդեն այն ժամանակ պրոլետարիատի գիլտատուրա յիր, քանի վոր մենք, բոլշևիկներս, մեծամասնություն եյինք կազմում: Սակայն պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության գիլտատուրան պազարեց ֆորմալ կերպով գյուղացիուն ունենալուց ձախ-ես-երական «պուտչից» հետո, ձախ ես-երների հետ ըլոկը խզելուց հետո, յերբ զեկավարությունն ամբողջապես ու լիովին անցավ մի կուսակցության ձեռքը, մեր կուսակցության ձեռքը, վորը պետության զեկավարությունը չի բաժանում և չի կարող բաժանել ուրիշ կուսակցության հետ: Հենց այս և, վոր մեզանում կոչվում ե պրոլետարիատի գիլտատուրա:

Վերջապես, 1918 թվի նոյեմբերին, հետադարձ հայացք զցեցով հեղափոխության անցած ուղու վրա, Անինը դրում եր.

«Այո՛, մեր հեղափոխությունը բուրժուական և, բանի դեռ մենք ընթանում ենք դյուղացիության՝ վրապես մի ամբողջուրյան հետ մեկնենք: Սա մենք պարզեց եւ պարզ եյինք գիտակցում, հարցուրավոր ու հազարավոր անդամեր ասում եյինք սկսած 1905 թվականից, պատմական պրոցեսի այս անհրաժեշտ աստիճանի վրայից յերեք չենք փորձել վոչ ցատկել, վոչ եւ զեկրեաներով վերացնել այս... Բայց 1917 թվականին, սկսած ապրիլ ամսից, Հոկտեմբերյան նեղափակուրյանից շատ տարչ¹, իշխանությունը մեր կողմից վերցնելուց առաջ², մենք բացահայտորեն ասում եյինք ու պարզաբանում ժողովրդին. հեղափոխությունն այժմ չի կարողանա սրա վրա կանգ առնել, վարուժեան յերկիրն առաջ և անցել, կազմակերպման առաջ և քայլել, չտեսնված չափերի յեւ հասել ավերմունքը, վորը պահանջնուած յի (այդ բանը վրեւն մեկն ուղում է թե վոչ), պահանջնելու յի քայլեր անել գետի առաջ, դեպի ացիալիդը: Վորովինեան այլ կերպ առաջ գնալ, այլ կերպ վրեկել պատերազմից խօշանագովովների ված յերկիրը, այլ կերպ թերելացնել աշխատավորների ու շահագործվողների տառապանակները չի կարելի: Հենց այնպես գուրս յեկավ, ինչպես մենք ասում եյինք: Հեղափոխության ընթացքը հաստատեց մեր գատողության ձևուածքը: Ակրում «ամբողջ» գյուղացիության հետ մեկտեղ միապետության թյունը, Ակրում «ամբողջ» գյուղացիության հետ մեկտեղ միապետության գեմ, կարգածատերերի գեմ, միջնադարի գեմ (և այդ չափով հեղափոխությունը մնում է բուրժուական, բուրժուա-գեմոկրատական հեղափոխություն): Թյունը մնում է բուրժուական, բուրժուա-գեմոկրատական հեղափոխություն:

1 Բնդդ ծումն իմն և Ի. Ստ.:

թվում գյուղական հարստամերի, կաւակների, սպեկուլանոների դեմ 1, և այդ չափով հեղափոխությունը զանում և տցիալիտական» (տես հ. XXIII, էջ 390—391):

Ինչպես տեսնում եք, Անդինը բաղմից ընդունած եր ամբողջ խորությունն այն տարբերություն, վոր կար բուրժուազիմուկատական հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանի առաջնորդի և Հոկտեմբերի նախապատրաստության ժամանակաշրջանի յերկրորդ ստրատեգիաականի առաջնորդի միջև: Այնաեղ լոգունդն եւ ամբողջ գյուղացիության հետ ինքնակալության գեմ, այսուեղ լոգունդն եւ ամենաչափոր գյուղացիության հետ բուրժուազիայի գեմ:

Այն փաստը, վոր բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջը հասցնելը յերկարաձգվեց-դարձավ մի ամբողջ ժամանակաշրջան Հոկտեմբերից հետո, վոր, ինչ չափով բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջն սյինք հասցնում, չեր կարող մեզ չհամակրել «ամբողջ» գյուղացիությունը, —այս փաստը, ինչպես վերում յես արդեն ասել եմ, մազաշափ անգամ չի սասանուայն հիմնական դրութը, վոր մենք դեպի Հոկտեմբեր եյինք ընթանում և Հոկտեմբերին հաղթություն տարանք ամենաշխավոր գյուղացիության հետ մեկտեղ, վոր բուրժուազիայի իշխանությունը տապալեցինք և պրոլետարիատի գիկատուրա հաստատեցինք (գիկատատուրա, վորի խնդիրներից մեկն ել յեղափ բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջը հասցնելը) ամենաշխավոր գյուղացիության հետ մեկտեղ, յերբ կային կուլակության (նույնպես գյուղացիներ) գիմազդություն և տատանումներ միշտակ գյուղացիության կողմից:

Թվում ե, թե պարզ ե:

3) Այնուհետեւ ձեր նամակում դուք դրում եք.

«Արդյոք ճիշտ ե այն պնդումը, թե օմենք մասնեցանք Հոկտեմբերին այս լոգունդով՝ դաշինք գյուղական չխավորաւրյան հետ՝ միախիլ չեզանցմանը: Վճռ, ճիշտ չեւ Արդեն վերը մատնանշված նկատառութերից ու Անդինից բերված քաղվածքներից յերեսմ ե, վոր այս լոգունդը կարող եր ծագել միայն այն ժամանակ, յերբ հասունացագ գասակարգային բաժանումը գյուղացիության ներսում» (Անդին), այսինքն «1918 թ. ամառն ու աշնանը»:

Այս մեջբերումից դուրս ե դալիս, վոր կուսակցությունը միշտակի չեղոքացման ուղին բանեց վահա թե Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում և վահա ել Հոկտեմբերի ժա-

1 Ընդդեմ իւն հ. Բ. Ստալին:

ժանակի, այլ Հոկտեմբերից հետո և մանավանդ 1918 թվականից հետո, չքավորական կոմիտեներից հետո: Սա միանգամայն սխալ է, ընկ. Յան—սկի: Ընդհակառակը, միջակի չեղոքացման քաղաքականությունը վա՛շ թե սկսվեց, այլ վերջացավ չքավորական կոմիտեներից հետո, 1918 թվականից հետո: Միջակի չեղոքացման քաղաքականությունը վերացվեց (և վոչ թե մտցվեց) մեր պրակտիկայում հենց 1918 թվականից հետո: Հենց 1918 թվականից հետո, 1919 թվականի մարտին, բանալով մեր կուսակցության VIII համագումարը, Լենինն ասաց.

«Հին ժամանակվա սոցիալիզմի լավագույն ներկայացուցիչները, — յի՞շ նրանք գետ հավատում եյին նեղափոխությանը և թևրիապէս ու գաղափարապէս ծառայում եյին նրան,— խօսում եյին զյուլացիարյան չեզբացման մասին, այսինքն այն մասին, վոր այդ միջակ գյուղացիությունը դարձնեն միթե վոչ պրոլետարիատի նեղափոխությանն ակնիվորեն ոգնող, գոնեւ այդ նեղափոխությանը չեղանգարող, չեղոք, մեր թշնամիների կողմը չըստող հասարակական խափ: Խնդրի այս կերպացական, թերթական զրվածքը մեզ համար լիովին պարզ է: Բայց ան բավական չեւ: Մենք մտել ենք սոցիալիստական ժնմարարության մեր այնպիսի տատիք¹, յերբ հարկավոր և մշակել կոնկրետ կերպով, մանրամասներուն, զյուղում կատարող աշխատանքի փորձով ստուգված այն հրմանական կանոններն ու ցուցումները, վորոնցով մենք պետք ենեկալարպինք, վորպեսի միջակ գյուղաց նկամամբ կանգնենք հաստատում դաշինքի հսկի վրա» (տես հ. XXIV, էջ 114):

Ստացվում է, ինչպես տեսնում եք, ձեր նամակում ձեր ասածին ուղղակի հակադիր մի բան, ընդդուրում դուք այսոտեղ մեր իսկական կուսակցական պրակտիկան գլխիվայր եք շուրջ տալիս՝ չեղոքացման սկիզբը շփոթելով նրա վերջի հետ:

Միջակը նվիրում ու տատանվում եք հեղափոխության ու հականդափոխության միջն, քանի գետ տապալում եյինք բուրժուազիային, քանի գետ խորհուրդների իշխանությունն ամրացված չեր, և գրա պատճառով ել ճարկ եք ինում միջակին չեղոքացներ: Միջակն սկսեց մեր կողմը շուրջ գալ, յերբ նա սկսեց համոզվել վոր բուրժուազիան «լրջորեն» և տապալված, վոր խորհուրդների իշխանությունն ամրանում է, կուլակին հաղթահարում են, Կարմիր բանակն սկսում է հաղթել քաղաքացիական ճակատներում: Հենց այսպիսի բեկումից հետո հնարավոր գարձավ կուսակցության ստրատեգիական այն յերրորդ լոգունը, վոր Լենինը ավեց կուսակցության VII համագումարում, այն ե՛ հենվելով չքավո-

1 Ընդդուրում իմն է: Ի. Ստալին:

ըռության վրա և հաստատուն դաշինք հաստատելով միջակի հետ՝ հառաջ հանուն սոցիալիստական շինարարության:

Դուք ի՞նչպես կարողացաք մոռանալ այս հանրահայտ փաստը՝ Զեր նամակից բղխում ե այնուհետեւ, վոր միջակի չեղոքացած ման քաղաքականությունը պրոլետարական հեղափոխության անցնելու ժամանակ և այդ հեղափոխության հաղթությունից հետո առաջին օրերին սիսալ ե, պիտանի չե և, այդ պատճառով, անընդունելի յե։ Սա միանգամայն սիսալ ե, ընկ. Յան—սկի։ Բանը հենց դրա հակառակն ե։ Հենց բուրժուազիայի իշխանության տապալման ժամանակ և մինչեւ պրոլետարիատի իշխանության ամրացումն և միջակն ամենից շատ տատանվում ու դիմապրում։ Հենց այս ժամանակաշրջանում ե, վոր անհրաժեշտ և դաշինքը չքավորության հետ ու միջակի չեղոքացումը։

Զեր սիսալի վրա համառելով, գուշք պնդում եք, վոր գյուղացիության հարցը մեծ նշանակություն ունի վոչ միայն մեր յերկրի համար, այլև մյուս յերկրների համար, «Վորոնք ավելի կամ պակաս չափով հրշեցնում են մինչհոկտեմբերյան Ռուսաստանի եկոնոմիկան»։ Այս վերջինն, ինարկե, ճիշտ ե։ Բայց առա թե ինչ ե ասում կենինը Կոմինտերնի II կոնգրեսում, ազգարային հարցի վերաբերյալ իր թեզիսներում՝ պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելու ժամանակաշրջանում միջակի նկատմամբ պրոլետարական կուսակցությունների վարելիք քաղաքականության մասին։ Ամենաչքավոր գյուղացիությանը կամ, ավելի ճշգրիտ, «Ոյուղի աշխատավոր ու շահագործվող մասսաներին» բնորոշելով վորպես առանձին մի խումբ, վորը բաղկացած ե գյուղատնտեսական բանվորներից, կիսապրոլետարներից կամ պարցելային գյուղացիներից ու մանր գյուղացիությունից, և հետո անցնելով միջակ գյուղացիության՝ վորպես գյուղի հատուկ խմբի՝ հարցին, կենինն ասում ե.

«Միջակ գյուղացիություն» անվան տակ անտեսագիտական իմաստով հարգավոր ե հասկանալ մանր հողագործներին, վորոնք սեփականության կամ վարձակալության իրավունքով նույնպես փոքր հողամասերի յեն տիրում, բայց այնուամենանիվ այնպիսի հողամասերի, վորոնք կապիտալիզմի որով իրեւ ընդհանուր կանոն տալիս են ընտանիքի ու տնտեսության վոչ միայն աղքատիկ աղքուսար, այլև վորոշ հավելուրդ ստանալու հնարավորություն, —հավելուրդ վորն ընդունակ ե, գոնե լավագույն տարբիներում, կապիտալի վերածվելու այդ մանր հողագործները բավականին հաճախ են զիմում ոտար աշխատուժ վարձելուն... Հեղափոխական պրոլետարիատը չի կարող իր հոմար խնդիր դնել այդ խավը իր կողմը գրավելը, —գոնե ամենամատիկ ապագայի յել պրալետարիատի գիկտատարայի ժամանակաշրջանի սկզբի համար։ Նո պետք ե

տահմանափակվի այդ խավը չեղոքացմելու խնդրով,—այսինքն ստիպի նրան, զոր-ակտիվ աջակցություն ցույց չտա բուրժուազիային՝ վերջինիս կողմից պրոկ-տարիստի գեմ մզկող պայքարում» (տե՛ս Կոմիտաներնի և կոնգրեսի սպագէր հաշվետվությունը, եջ 610—611):

Սրանից հետո ի՞նչպես կարելի յե պնդել թե միջակի չեղու-քացման քաղաքականությունը կարող եր «ծագելը մեղ մոտ 1918 թվականի ամառը և աշնանը» մմիտյան, այսինքն խորհուրդների իշխանության, պրոլետարիատի իշխանության ամրացման գոր-ծում յեզած վճռողական հաջողություններից հետո:


Ինչպես տեսնում եք, պրոլետարական կուսակցությունների ստրատեգիական լոգունդի հարցը գեղի սոցիալիստական հեղափո-խություն կատարվող անցման ու պրոլետարիատի իշխանության ամրապնդման մուենտին, նույնպես, ինչպես նաև միջակի չեղու-քացման հարցը, այնպես պարզ չե, ինչպես դուք պատկերացնում եք այս:

4) Բոլոր վերը ասածներից յերեւում ե, զոր Լենինի յերկերից ձեր բերած ցիտատները վոչ մի չափով չեն կարող հակադրվել կուսակցության՝ հեղափոխության յերկրորդ ետապի հիմնական լոգունդին, վորովհետև նրանք, այդ ցիտատները ա) խոսում են վոչ թե Հոկտեմբերից տռաջ կուսակցության ունեցած հիմնական լոգունդի մասին, այլ բուրժուական հեղափոխությունը Հոկտեմ-բերից հետո մինչև վերջը հասցնելու մասին, բ) նրանք վոչ թե հերքում, այլ հաստատում են այս լոգունդի ճշտությունը՝ Յես արգեն վերեւում ասել եմ և հարկադրված եմ մեկ անգամ ել կըրկ-նել, վոր հեղափոխության յերկրորդ ետապում, մինչև իշխանու-թյունը պրոլետարիատի կողմից վերցնելու ժամանակաշրջանը կուսակցության ունեցած ստրատեգիական լոգունդին, վորի գըլ-խավոր թեման իշխանության հարցն ե, չի կարելի հակադրել բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու ինդիքը, վորն անց եր կացվում իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցնելուց հետո յեկող ժամանակաշրջանում:

5) Դուք խոսում եք «Правда»-յում տպված՝ ընկ. Մոլոտովի «Բուրժուական հեղափոխության մասին մեր յերկրում» (12 մար-տի 1927 թ.) հայտնի հոդվածի մասին, վորը, բանից գուրս և դալիս, հենց «զրդել ե» ձեզ պարզաբանման համար դիմելու ինձ: Յես չգիտեմ, թե դուք հոդվածներն ինչպես եք կարգում, ընկ. Յան—սկի, Յես ել եմ կարգացել ընկ. Մոլոտովի հոդվածը և կարծում եմ, վոր այն վոչ մի չափով չի հակասում այն բանին, ինչ ասված ե մեր կուսակցության XIV համագումարին իմ արած

գեկուցման մեջ՝ զյուղացիության վերաբերյալ մեր կուսակցության լողունդների մասին Հնկ. Մոլոտվով եր հոգվածում խոսում ե կուսակցության վհչ թե Հոկտեմբերի ժամանակաշրջանի հիմնական լոգունդի մասին, այլ այն մասին, վոր, ինչ չափով կուսակցությունը Հոկտեմբերից հետո մինչև վերջն եր հասցնում բուրժուական հեղափոխությունը, նա վայելում եր բոլոր զյուղացիների համակրանքը: Բայց յես արդեն վերելում առել եմ, վոր այս փաստի հավաստումը չի ժխտում, այլ ընդհակառակը, հաստատում ե այն հիմնական դրույթի ճշտությունը, վոր մենք տապալցինք բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի դիկտատուրա հաստատեցինք ամենաչքավոր զյուղացիության հետ մեկտեղ ու միջակի չեղոքացմամբ՝ ընդդեմ քաղաքի ու զյուղի բուրժուազիայի, վոր առանց զբան մենք չպիտի կարողանայինք մինչև վերջը հասցնել բուրժուական հեղափոխությունը:

„ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՀՅ 7-8,
 15 ապրիլ 1927 թ.:



Հրապարակություն
Հայաստան 1940 թ.

688 A 689

Թարգմ. Ս. Խանդկարյան
 Հայ. թարգմ. Խմբ. Ս. Կիրակոսյան
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
 Սրբագրիչ Վ. Զիդեցյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավդիտի լիազոր Ի-4893, հրատ. № 464,

Գատվ. № 119, արժան 10,000:

Հանձնվել ե արտագրության 3/VII 1937 թ.

Ստորագրված ե տպագրելու 14/VIII 1937 թ.

Գինը 20 կ.

Հայկուսհրատի տպարան, Յերևան, Ալահվերդյան 71

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021345

408

-024пн.
Ф.Б.С 20 4.

ЦЕНА

A II
6816

И. СТАЛИН
О ТРЕХ ОСНОВНЫХ ЛОЗУНГАХ
ПАРТИИ ПО КРЕСТЬЯНСКОМУ
ВОПРОСУ

Армпартиздат, Ереван, 1937